



ԶԱՎԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆ

ՀՈՒՅԱԸ՝ ՀԱՎԱՏՔՈՎ ՈՒ ՍԻՐՈՎ

Քրիստոնեության մասին խոսիլ կնշանակե հավատքի մասին խոսիլ: Իսկ քրիստոնյա անհատի մասին խոսիլ, ամենեւն առաջ կնշանակե խոսիլ անոր հավատքին մասին: Ընդհանրապէս քրիստոնեաներուն հավատացյալ անունը կուտանք: Քրիստոնեան իր կյանքով ու գործունեությամբ պետք է ապացուցանե աստվածսիրություն, ընկերսիրություն և վերջապէս սեր ամենքին նկատմամբ: Առանց սիրո զգացումին, քրիստոնյա բացատրությունը ըմբռնելի չէ արդեն: Մակայն քրիստոնեյա ըլլալ, ամենեւն առաջ կնշանակե հույս ո՛նենալ: Ըստ Նոր Կտակարանի ուսուցման, քրիստոնեային կյանքը էապէս հույսի կյանք մըն է: Եփեսացւոց ուղղած իր նամակին մէջ Պողոս առաքյալ կգրե. «Չի էիք ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի... և յոյս ինչ ոչ ունէիք և անաստուածք էիք յաշխարհի» (Եփես. Բ 12): Ուրեմն քրիստոնեաները հուսացողներ են, վասնզի Աստված առաջնորդած է զիրենք «ի յոյսն կենդանի», ըստ Պետրոս առաքյալի որ կգրե կաթողիկոսաց Ա իր նամակին մէջ, «Օրհնեալ է Աստուած և հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի» (Պետ. Կաթ. Ա 3): Հավատքով անաստան ըլլալ, ըստ Պողոս առաքյալի կնշանակե, Ավետարանին մաքուր ակունքներէն բխած հույսին

կառչիլ, ահա թե ինչպէս. «Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք և հաստատեալք և անշարժք ի յուսոյ Աւետարանին»... (Կող. Ա 23): Իսկ ըստ երապեղցւոց ուղղած նամակին, ուժգնորէն փարելու է հույսին. «պիւղ կայցուք զխոտովանութիւն անշարժ յուսոյն, զի հաստարիմ է որ խոտացան» (Եբր. Ժ 23): Ակնհայտ իրողություն է ուրեմն որ հույսը քրիստոնեայի կյանքին մէջ կեղորմական կշանակություն ունի:

Մակայն քրիստոնեական իմացումին և հասկացողության մէջ հույսը շատ տարբեր է աշխարհիկ ուրիշ հույսի տեսակներէ: Հարկաւ երկու պարագային ալ անունները միայն նունն են, բայց էական տարբերություններ կան երկուքին միջև: Անշուշտ հեթանոսներն ալ որոնց մասին Պողոս առաքյալ անհույս որակումը կուտա, բազմազան հույսեր ունենալու էին: Չաստվածներ ունեին, խնդրանքներ կմատուցանեին անոնց թերևս և ակնկալություններ ալ կանուցանեին: Բայց հույս, ավետարանական հասկացողությամբ հույսը չունեին, այն որ Աստուծո ձայնն է մեր ներսիդին և կխոսի իրբ խիղճ ու շնորհով կտրվի: Հույսը ստաքեյական բացատրությամբ կոչ է ու հրավեր, այսպէս. «Լուսատր առնել զաչս սրտից՝ առ ի գիտելոյ մեզ զինչ է յոյս կոչմանն նորա և զինչ է մեծութիւն փառաց ժառանգութեանն նորա ի սուրբս» (Եփես. Ա 18): Կամ

«Յուսով կենացն յաիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած, յառաջ քան զԺամանակս յաիտենից» (Տիտու Ա. 2): Այս կապակցությամբ ավելի ակնբախ է Եփեսացվոց ողորկած նամակի չորրորդ գլուխի չորրորդ համարը որ կըսէ, «Մի մարմին և մի հոգի որպէս և կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»: Հույսը ուրեմն կհրավիրէ կոչյալները ճշմարտությամբ, քանի որ, կըսէ առաքյալը, «Իբրև լուսք զհաւատսն ձեր որ ի Յիսուս Քրիստոս ի տէր մեր և զւերն զոր ընդ ամենայն սուրբս ունիք. վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս... քանիև ճշմարտութեան անտարանին որ եհաս առ ձեզ» (Կող. Ա. 4—6): Այսպես է հույսը եթէ քրիստոնյաներ ուզեն, հետամուտ ըլլան հույսի կոչին:

Ո՞վ է որ կհուսարե մեզ: Ըստ առաքյալին ուսուցման սուրբ Հոգին է որ զմեզ կհուսարե: «Այլ Աստուած յուսոյ, լի արացէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առանելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ստույգ է թէ սուրբ Հոգին է որ հույսով կլեցնէ հավատացյալները և ուրեմն սիրով կզեղուն սրտերը: Ահա թէ ինչ կկարդանք այս մասին: «Չի սէրն Աստուծոյ սիրեալ է ի սիրտս մեր, ի ձեռն Հոգւոյն սրբոյ որ տուա մեզ» (Հռոմ. Ե 5): Հիսուս սուրբ Հոգվով հայտնվեցավ մարդկության. սուրբ Կույսը սուրբ Հոգվով հղացավ: Դրախտին մեջ ապահովաբար տատանկ չկար. Աստված մարդկային դրախտ մըն ալ ստեղծեց հանձին սուրբ Կույսին որ մեղք չունէր որմէ ծնալ Հիսուս: Հույսը ուրեմն որուն մասին կխոսինք, աշխարհն ու իր կարելիությունները չեն կրնար հայթայթել մարդկության: Քրիստոնեական իմացումով հույսը աշխարհը ամբողջ կպարագրէ, վասնզի աշխարհն ալ կհեծէ ու կսպասէ հույսին ակրկալությամբ ու այս հույսը, ի վերուստ, Աստուծոյն կտրվի ի ձեռն կենսատու և հուսատու սուրբ Հոգվոյն:

Ա. գրական ճշմարտություն է և ուրեմն ստույգ թէ ս. Հոգվոյն շնորհներուն միջոցաւ այս աշխարհին վրա կապրինք, «Ի Քրիստոս»: Այս ի Քրիստոս քացատրությունը որուն հաճախ կհանդիպինք Պողոս առաքյալի նամակներուն մեջ, ինքն իր մեջ ուրիշ հողվածի մը նյութ կրնա ըլլալ. սակայն այստեղ բավականապէս բազմաթիվ անգամ կըրկրկնված հետևյալ քացատրությամբ: Հիսուս իր անձը զոհելով, մարդոց մեղքերը իր վրա առավ. ապահովաբար այնքան ծակը էին այդ մեղքերը որ Գողգոթայի ճանապարհին վրա, կբեցավ խաչի ծանրության ներքև... հետո ինչպես որ մետաղը կամ ոսկին մաքրելու համար կրակով կհալեցնեն,

այդպես ալ խաչին վրա մահվամբ քալեց մարդոց մեղքերը և հարությանբ զանոնք հարությունակից դարձուց իրեն: Բայց խաչով մահը ոչ թէ Հիսուսի մեղքերուն քալությունն էր; այլ Աստուծո մարդոց միջև հաշտություն, խաչը կհիք և նշանն էր մահվան վրա հաղթության, կհիք և նշանն անոր կտակի, անոր ուխտի: Որովհետև «զմեր մեղս իրով մարմնովն վերացուց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի և իցենք արդարութեանն կենակիցք» (Ա Պետ Բ 24): Ահավասիկ քրիստոնյային անխախտ հավատքը, միշտ ըստ առաքյալին որ կըսէ, «Եթէ կեամք՝ տեսուն կեամք, և եթէ մեռանիմք՝ տեսուն մեռանիմք. և արդ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ տեսուն ենք: Բանզի ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առհասարակ տիրեցէ» (Հռոմ. ԺԴ 8—9): Այս էր ծածկյալ խորհուրդը որ հրեից գայթակղություն և հեթանոսաց հիմարություն էր: «Բանզի մեռարուք և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած: Իսկ յորժամ Քրիստոս յայտնեացի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեացիք փառօք» (Կող. Գ 3): Այլ խոսքով, խաչյալ, թաղյալ և հարուցյալ Քրիստոսի վրա դրած ենք մեր հույսը և այս հույսը հավատք է, ստույգ ու անասան:

Հույսը հայտնված է բայց ավելի ևս պիտի պարզվի բոլորիս համար, քանի որ ժառանգակից պիտի ըլլանք իրեն ու հարազրվարճ բերկրանքով դեմ հանդիման պիտի կանգնինք աղբերահոս սիրուն որ է Աստված: Այս մտածումը իր լրումին կհասցընէ Պետրոս առաքյալ երբ կգրէ կաթողիկայց Ա նամակին առաջին գլուխին մեջ. «Օրհնեալ է Աստուած և հայր տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ բազում ողորմութեան իրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսըն կենդանի. ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, յանեղծ և յանարատ և յանթատամ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս ի ձեզ»: Աստվածային ողորմության, Քրիստոսի յայտնության և Նոր Կտակարանի ուսուցման տեսակ մը ամփոփումն է այս հատվածը: Հավատացյալը վերստին կծնի անոր կյանքի մը համար, ավագանի մկրտությանբ, շնորհք լցյալ, իբրև անոր արարած և զՔրիստոս զգեցյալ, այսինքն վերածնյալ հույսի կյանքին համար, կյանք որ հավատքով կգրահվի ու կպահպանվի:

Ի Քրիստոս հուսալից կյանքով ապրելու առնչությամբ մեր գիտությունը, ուղեցույցը Նոր Կտակարանն է անշուշտ. նույնիսկ Նոր Կտակարանն ալ սահմանափակ տեղեկություններ կուտա հույսին արդյունա-

վորման կամ վախճանաբանության մասին, այլ խոսքով, հավիտենական կյանքի մասին: Գարձալ Պողոս սուսպյան է որ հայտնաբերեց սուսպյան խոր ներշնչումով կրահայտնե Կորնթացվոց ողորմած իր առաջին նամակին Բ գլուխին մեջ այս մասին, «Չոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուս և ի սիրտ մարդոյ ոչ անկա, պատրաստեաց Աստուած սիրելեաց իրոց»:

Հույսը մեղքերե քավության, արդարացման և վերջնական փրկության ակնկալությունը ունի, ժառանգակից դառնալու համար հավիտենական կյանքին: Մեր շարականագիրն ալ, խոր քարեպաշտությանը նույն մտածումը կրկնե ըսելով «Յոյս իմ ես դու, քաիչ յանցանաց իմոց»: Հիսուսի միջոցալ մարդոց և Աստուծո միջև գոյություն ունեցող միջնորմը քակվեցալ: Որովհետև ըստ մեր շարականագրին Հիսուս «ի հողեղէն ի բնութենէ մարդկան, զշարշարանքս յանձն էառ, քանն հօր և անկիզբ, յայտնեցար, մարմնացար, իջեալ յերկնից խաչեցար, վասն մեր զմեղս սպաներ, ի խաչափայտին բեռեղով զմահ կոխեցեր»: Նոր Կտակ, նոր ուխտադրություն հասաչեկալ: Առաջին Ադամ դատապարտվեցալ, երկրորդ Ադամ դատապարտությունը ջրնջեց: Առաջին կինը Ադամեն ստեղծվեցալ, երկրորդ Ադամ, կնոջմե ծնալ: Առաջին Ադամ ծառին պտուղը կերալ և պատժվեցալ. երկրորդ Ադամ խաչին վրա ճնված իր մարմինը իբրև համեղաճաշակ պտուղ տվալ որուն ճաշակմամբ մեղքերուն պատիժը կքավվի: Ուստի փրկության առհավատչյան տրվեցալ, այլ խոսքով ի Քրիստոս հավատացյալները, հույսին ակնկալույց, կապալիցին փրկության ինչպես կիրառե առաքյալը ըսելով. «Ձի յուսով ապրեցար, այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի գոր տեսանէ որ՝ զի՞ ես յուսայ: Ապա գոր ոչն տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք» (Հռոմ. Ը 24—25):

Մեղքերեն քավության և հավիտենական կյանքի ակնկալությունեն անդին, ուրիշ ի՞նչ կրնա ըլլալ հավատացյալին համար: Հույսը:

Հույսը փառքի ալ ակնկալությունն է, մասնգի նախ Քրիստոս փառավորվեցալ: Փառքը որուն մասին կխոսինք, դարձալ աշխարհիկ փառքը չէ, այլ տեսակ մը այլակերպություն կամ պայծառակերպություն, գորություն, հոգևոր կյանք, որոնց մասին իրաժեկ կդառնանք կարդալով կամ սերտելով Կորնթացվոց ողորմած նամակը ուր առաքյալը կրտե, «ապալանությունս քեր կերտմանվի և հարությունս կառնե անապական: Կերտմանվի անարգությամբ, հարությունս կառնե փառքով: Կերտմանվի տկարու-

թյամբ, հարությունս կառնե գորությամբ: Կրտերմանվի իբրև շնչալոր, հարությունս կառնե իբրև հոգևոր»: Ավելի ևս պարզ ու իմանալի կըլլան վախճանաբանական այս հաստատումները երբ անդրադառնանք Հովհաննու Ավետարանի ԺԷ գլուխին ուր այս անգամ հավատող գլուխ Քրիստոս ինք կրացատրե փառավորման մասին, փառք՝ որ կրխի հորմեն որդվույն և որդին կուսա աշակերտներուն, այսպես. «Այժմ փառալուրեա զիս, հայր, առ ի քէն փառքն գոր ունէի յառաջ քան զիսնէլն աշխարհի առ ի քէն... Եւ զփառսն գոր ետոր ինձ՝ ետու նոյս... կամիմ՝ զի ուր եսն եմ, և նորա իցեն ընդ իս, զի տեսանիցեն զփառսն զիմ, գոր ետորն ցիս»: Որեմն Հիսուսի աշակերտներուն, նաև հավատացյալներուն տեսնելիք փառքը Հիսուսի գորությունն է, յուսավորությունն է, Հորմեն առ Որդին սիրտ հավիտենական աղբերացումն է: Աստուծո սերը առ Որդին յոյս է, այդ պատճառալ ալ մեր շարականագիրը հոգեգրած է «ճառագայթ փառաց Հօր միածին Որդի»: Անիկա կենսատու յոյս է, փառք է ու պատիվ:

Մեր ապագային վերաբերմամբ, այժմեն իսկ մեր ունեցած հույսը մխիթարություն է և իբրև ճառագայթ կամ նկարագիր էության փառաց անեղին, սերն է որով Որդին կրպայծառակերպի և ի Քրիստոս հավատացյալներն ալ իր միջոցալ պիտի պայծառակերպվին: Այս է հավատացյալներուն հույսը: Հույսը հուսալով կատացվի:

*
* *

Հավատքին պատկան է հույսը: Անոր արատները կանանին հավատքին պարարտ հողին մեջ, ուստի իրարմե անբաժան են: Նույնիսկ կարելի է անվարան հավատել թե հավատքին մեկ տարբեր անունն է հույսը: Հավատքով կտանանք քրիստոնեական ճշմարտություններուն ավետիսը, հավիտենական կյանքի խոստումն ու հույսը: Ահավասիկ և փաստը. «Տառայել Աստուծոյ կեղանույ և ճշմարտի և ակն ունել Որդոյ նորա յերկնից»: Հավատքի միջոցալ մարդ կրնա ինքզինք ունանացնել, անանձնական սիրով քաշխվելու համար այլոց, Քրիստոսի արդարությունը որպես զեն ու զքան հագվելու, որովհետև ո՞վ կրնա սուկ իր միջոցներով արդարանալ: Քրիստոսով արդարացած ի ձեռն շնորհաց, հավատացյալը կրհուսա: Հավատքով կրնանք համբերել, որովհետև «Մեր հոգույն՝ ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք» (Գալ. Ե 5): Հավատքը վերջապես շտեմկված քաներուն վերաբերմամբ ստուգություն է կամ հիմն է որուն վրա խարսխված է հույսը:

Բնականաբար հավատքն ու հույսը հոմասին չեն իրարու: Թեև միասին կրնաքանան: Բայց հույսը քայլ մը առաջ ալ կանցնի հուսալից վստահությամբ: Այս մասին ամենն ցցուն օրինակը ունինք հանձին ս. գրական դեմքերեն հավատո հայր Աբրահամի որուն կյանքն ու գործը սպառիչ կերպով կբացատրեն ըսել ուզվածը վասնզի անկա... հույսին դեմ հուսաց: Հավատաց Աբրահամ Աստուծո «եթէ կենդանի առնէ զմեռեալս և կոչէ զզոյն իբրև զզոյ: Որ յանյոյսն յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց, որպէս և ասացան, թէ այնպէս եղիցի զասակ քո: Եւ նա ոչ երկմտեաց ի հաւատոցն. թէպէտ և հայեցաւ ի մարմին իր այնուհետև իբրև ի մեռեալ, քանզի զհարիւրամեանիւր ուրեմն էր, և ի մեռելութիւն արգանդին Աստայի: Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ՝ և հաստատեցաւ ի միտս իր, թէ որ խոստացան՝ կարող է առնել» (Հոռմ. Դ 17—21):

Ուժեղ արտահայտություն մը գործածած պիտի ըլլանք եթէ հայտնենք թէ հույսը անհուտրեն հուսալ կնշանակե, նույնիսկ հույսին դեմ հուսալ է, բայց տակալին այս արտահայտությունը ինքնըստինքյան հակասությունն չէ, քանի որ մահվան դեմ կրհուսանք: Մաղմուներգու թագավոր-մարգարեն Դավիթ այսպէս կըսէ «Որ յուսայ ի Տէր, որպէս լեռնն Սիոն, մի սասանեացի յափտեան և որ յուսացեալ է ի Տէր, որախ լիցի» (Սաղմ. 135): Գիտենք մարդկային մեր կարողություններուն սահմանափակ ըլլալը. առաքյալն ալ կը հիշեցնէ այս պարագան երբ կըսէ «Արթունք եղիցուք և զգեցցուք զգրահսն հաւատոյ և զպիտոյ և դիցուք զսաղաւարտն յուսոյն փրկութեան» (Ա. Թես. Ե 8):

Անգամ մը ևս հաստատենք թէ հույսի մասին ավետարանական ուսուցումը, մեր շուրջի տեսանելի ու շոշափելի իրերուն համար չէ: Այլ վստահություն, խոր, անխախտ հավատք Աստուծո վրա որուն մեջ կասկածն ու վարանքը տեղ չունին ու չեն կորուսար ունենալ: Մի միայն հավատք ստուգությամբ ամրացալ:

Քրիստոնեական այս ակնկալության և հույսին մասին Պողոս առաքյալ Կորնթացվոց ուղղած երկրորդ նամակի առաջին գլուխին մեջ, ավելի ևս կլուսաբանէ երբ Ասիո մեջ ծանր մեղություններու կհանդիպի և նույնիսկ մահվան կոտորածարտովի: «Այնքան անտանելի մեղություններու հանդիպեցա որ կյանքեն հույսս կտրեցի, կըսէ. մահվան վճիռ ստացա: Գուցէ այսպէս պատահեցալ որպէսզի հույսս իմ վրաս չդնէմ,

այլ Աստուծո որ մեռելները կհարուցանէ, մեզ ալ կփրկէ և պիտի փրկէ մահացուցիչ վտանգներէ ու փորձություններէ»: Որքան բնական կերպով կպատմէ ու կուսուցանէ, կարծեք թէ երեկ կամ նույնիսկ այսօր պատահած ըլլար ակնարկված դէպքը: Կյանքի մեջ այսպէս է, երբոր անհույս կացություններ ստեղծվին, ինչ ընելիքնիս չենք գիտեր, ուղղություն կկորսնցնենք, կմնա միայն հույսը: Հույսին կոտորանք երբ նույնիսկ մահը մոտեցած է մեզի կամ մեր հարազատին: Հույսը վստահություն կենդանի տ ալն թէ Աստված մեռյալները կհարուցանէ: Հույսն է, որ կբաշտաբեր որովհետև ետև թողած, լքած ենք մտահոգությունն ու երկյուղ և ուշադիր ենք մխիթարող ու բաշտաբերող ս. Հոգվոյն: Ահավասիկ վկայությունը. «Զի ոչ առէք զհոգին ծառայութեան միտ անգամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք արքա, հայր: Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ ենք որդիք Աստուծոյ: Եւ եթէ որդիք, ապա և ծառանգք. ծառանգք Աստուծոյ և ծառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ լինիմք և փառացն հաղորդ լինելոց ենք» (Հոռմ. Ը 15—17): Հասկնալի է թէ հույսը իր լուսմին կհասնի... մահվամբ: Մահվան ետք անշուշտ Աստված է որ կհարուցանէ մեռյալները: Հավատքին վրա խարսխված հույսը, անապօթք և միշտ կրնթանա դեպի հուսացվածը: Այն որ կհուսա, գիտենք որ կազմ և պատրաստ կսպասէ հուսացվածին: Հույսը հարատև հսկումի, արթնության վիճակի մեջ կպահէ, պետք է պահէ հավատացյալը, ինչպէս առաքյալը կհավատտէ արդեն: «Ապա մի զքնով անկանիցիմք որպէս և այլքն, այլ արթունք և գուարթունք եղիցուք: Զի որ ննչենն՝ գիշերի ննչեն և որ արբեմանն՝ գիշերի արբեման: Այլ մեք զի տրուցեան ենք, արթունք եղիցուք» (Ա. Թեսաղ. Ե 6—8): Հսկումի, ուշադիր արթնության, սպասումի այս պատվերը, Ավետարանի բովանդակ տարածքին վրա կրկին ու կրկին կհայտնվի: Բազմաթիվ մեքերումներն երկուքը միայն հիշենք. «Արդ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեալ, եթէ ի մեջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս: Գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն» (Մարկ. ԺԳ 35—36): Կամ «Երանի իցէ ծառայիցն այնոցիկ զորս եկեալ տէրն գտցէ արթուն» (Ղուկ. ԺԲ 37): Հուսացողը երազատեսի նման, հայացքը պարասպին, զուր տեղը չի նայիր, այլ բարձրագույն կակնկալէ. առաքյալը այլևս իր բարձրագույն կետին կհասցնէ իր ուսուցումը երբ կըսէ թէ «քստ ակնկալութեան և յուսոյն իմոյ համարձակությամբ սպասեմ յամենայն ժամ, զի ինձ կեսնք Քրիստոս է

և մեռանել շահ»: Երբ հույսը անխախտ է և հավատքը անասան, հուսացողը վասն հուսացյալին նույնիսկ մութին ու խավարին մեջ ալ կրնթանա հառաջ, վասնզի մութը հույսին և հավատքին համար լույս է, ինչպես հիանալիորեն և խոր հայտնատեսությամբ դարեր առաջ երգած է Սաղմոսերգուն Դավիթ. «Սաւարն՝ ի քէն ոչ խաւարանայ և գիշերն որպէս ահի լուսաւոր եղիցի և խաւար նորա որպէս գլոյս նորա» (Սաղմ. 138: 12): Ինչ փույթ թե հավատացյալը տեսանելի են անտեսանելին կրնթանա: Հավատո Հայր Աբրահամ ալ այդպէս չըրա՞վ. հրամայելիցալ իրեն որ մեկնի դեպի իր ժառանգելիք երկիրը. գնաց. Հէր գիտեր դեպի ո՞ր: Հույսն ալ կնդէ մեզ որ մեկնիք, առանց նպատակը տեսնելու:

Հույսը բարձրագույն ըլլալով հանդերձ իր սպասումին մեջ համբերատար է, երկայնամիտ: Ուղիղ համեմատությամբ, որքան ամուր է հույսը, այնքան ավելի վատան է իր ակրնկալության վերաբերմամբ: Նույնիսկ քիչ մըն ալ առաջ երթալով քսենք թե չարչարանքներու և տառապանքի մեջ հույսը կկոխվի, կամրանա համբերությամբ: Այս մասին շատ ծանոթ է Պողոս առաքյալին հետևյալ բացատրությունը. «Մեր նեղություններով ալ կպարծիքնք, զի նեղությունները համբերել կտրվեցնեն, համբերությունն ալ փորձառություն, փորձառությունը հույս: Հույսը չամչեցնէր»: Հույսին բնորոշ գիծն է ուրեմն դեպի հուսացվածը ընթանալ համբերությամբ և «փութով հասանել գալստեան ատրն սեւտն»: Այսպէս է հույսի միջոցալ հավատացյալներուն մխիթարությունն ու ս. Գրոց բնուցումը:

*
* *

Եթե հույսը արդարև կթի հավատքեն և անասան վատահոյությամբ կակնկալէ հուսացյալը, ուրեմն ի՞նչպէս, ի՞նչ ձևով կարտահայտե ինքզինք: Ըստ Ավետարանին, սրբակյաց կլանքով: Ահա վասիկ ապացույցը. «Ամենայն որ ունի գալս լույս յանձին, սրբէ գանձն իր, որպէս և նայն սուրբ է» (Ս. Յովհ. Գ. 3): Կամ «Դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիչիք»: Անսուրբ, չար, անարդար եղողը նաև անհույս կըլլա: Վաղանցուկ բոլոր հաճույքներուն ետևեն կհասնի դատնությունը: Բոլոր տեսակի չարություններուն և անսուրբ կենցաղի մեջ անհուսություն կա, ուրկէ հասկրնալի կըլլան նաև անձնապատկանություններն ու ոճիրները: Երբ բանավոր արարածները հուսալից կերպով դեպի Աստված չեն դառ-

նար, կնդորին, հակամետ են քղջախոհության, ընչաքաղցության, շատախոսության, հպարտության, նախանձի, կամ անտուն, անհայրենիք թափառումներու:

Հույսը նաև սիրով կհարատեն: Սերը համեմալնի կհուսա: Սիրո արձագանքն է հույսը. ավելի ճիշտը, սիրո լրումն է հույսը: Ուրեմն հույսով անվախճան է սերը: Քրիստոսով հայտնված Աստուծո սերը կտոհպէ, կընդէ մեզ որ հուսանք: Այլ խոսքով հույսը, սիրո արտահայտությունը, սիրո գործունեությունն է: Կողոսացվոց ուղղած իր նամակի առաջին գլուխի չորրորդ համարին մեջ առաքյալը կըսէ. «Լսեցիք Չեր ի Քրիստոս ունեցած հավատքին մասին և գտերն որ ընդ ամենայն սուրբս ունիք, վասն հուսույն որ պահի ձեզ հերկինս»: Իսկ անհուսությունը հեշտիվ ատելության կվերածվի:

Ավետարանին ուսուցմամբ հույսը կհայտնըվի նաև համբերությամբ ու խաղաղության, ահա վկայությունը, «Այլ Աստուած լույս լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, ստաւելու ձեզ լուսով գորութեամբ Հոգույն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Հույսը խնդության կարտահայտվի: Որ որ հույս չկա, թախիծն ու տրտմությունը կտիրեն: «Մի տրտմիցիք որպէս և այլքն որոց ոչ գոյ լույս» կպատգամե առաքյալը:

Այլոր առաքյալը կխարտե միշտ այն մասին թե պետք է ուրախ ըլլալ. «ուրախ եղերուք ի տէր, դարձեալ ասեմ, ուրախ եղերուք»: Ի հարկէ որքան խոր ըլլա հույսը, այնքան ալ մոտ կգգանք գմեզ Աստուծո: Անգամ մը ևս հիշենք, քիչ մը վերը կատարած մեր մեջբերումը. «Այլ Աստուած լուս լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ»:

Հույսը սիրով ու հավատքով, քաջություն կներշնչէ: Այսպէս կըսէ Պողոս առաքյալ. «Չենք ձանձրանար. թեև մեր մարմնին արտաքին մասը կմաշի, ներքին մարդը օր քստ օրէ կնորոգուի: Առօրյա, անցավոր նեղությունները, հալիտենական կյանքի երանության և փառքին կտաջնորդեն: Վասն զի երևցող բաներու շատ ալ կարևորություն չենք տար, այլ աներևույթ: Քանի որ երկրողները ժամանակավոր են իսկ աներևույթները հավիտենական»:

Ուրեմն, մտածելով աներևույթին և հավիտենականին մասին հավատքով, լցյալ սիրով և առավելյալ հուսով, Աստուծո փառաց լույսը կտեղու մեր հոգիներեն ներս, քանի որ սաղմոսերգունին հետ մենք ևս կըսենք, «Ի քեզ Տէր լուսացալ, մի ամաչեցից յախտեան»: